Ոչ պաշտոնական իմպլեմենտացիա

Գրանցվել է՝
Նոր խմբագրությամբ կանոնադրություն՝ 01.12.2008թ
ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից
Կանոնադրության փոփոխություն՝ 19.01.2011թ
ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից
Կանոնադրության փոփոխություն՝ 15.08.2017թ
ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից
Կանոնադրության փոփոխություն՝ 15.11.2019թ
ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից

Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի

Կանոնադրություն

Ե Ր Ե Վ Ա Ն – 2008

ԳԼՈՒԽ 1. Ընդհանուր դրույթներ

1.1. Սույն կանոնադրությունը մշակվել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի, «Հիմնադրամների մասին» և «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների պահանջներին համապատասխան:

1.2. Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամը (այսուհետ՝ Հիմնադրամ) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող իրավաբանական անձ է, որի հիմնադրման հիմնական նպատակը Հայաստանի Հանրապետության բանկային համակարգի կայունության և հուսալիության ապահովումն է՝ ֆիզիկական անձանց և անհատ ձեռնարկատերերի (այսուհետ՝ Ավանդատուների) բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու միջոցով:

1.3. Հիմնադրամը գործում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի, «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, (այսուհետ՝ Օրենք), «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, այլ օրենքների և իրավական ակտերի, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի և սույն Կանոնադրության հիման վրա:

1.4. Հիմնադրամի հայերեն անվանումն է Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամ:

1.4.1 Հիմնադրամի անգլերեն անվանումն է Deposit Guarantee Fund:

1.4.2 Հիմնադրամի ռուսերեն անվանումն է Фонд гарантирования возмещения вкладов:

1.5. Հիմնադրամի գտնվելու վայրն է՝ քաղաք Երևան, 0010, Խորենացի 15 «Էլիտ Պլազա» գործարարական համալիր:

1.6. Հիմնադրամի փոստային հասցեն է՝ քաղաք Երևան, 0010, Խորենացի 15 «Էլիտ Պլազա» գործարարական համալիր:

1.7. Հիմնադրամն ունի իր անվանմամբ հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով կլոր կնիք:

1.8. Հիմնադրամն ունի խորհրդանիշ, որի ստորին հատվածում՝ հորիզոնական դիրքով հետևյալ հաջորդականությամբ մեծատառ շարադրված են «պաշտպանություն վստահություն հուսալիություն» բառերը (այսուհետ՝ Բառեր): Բառերն ըստ հերթականության գունավորված են կարմիր, կապույտ և ծիրանագույնով: Դրանց վերին կենտրոնական մասում պատկերված է ոսկեգույն շրջան, որը խորհրդանշում է դրամ: Բառերից առաջինի սկզբնամասից և վերջինի վերջնամասից բրգաձև բարձրանում են իրարից առանձին կարմիր, կապույտ և ծիրանագույն երիզներ, որոնք միանում են ոսկեգույն շրջանի վերևում՝ խորհրդանշելով եռակի տանիք:

1.9. Հիմնադրամն ունի իր անվանումը պարունակող դրոշմներ և ձևաթղթեր, ինչպես նաև անհատականացնող այլ միջոցներ:

ԳԼՈՒԽ 2. Հիմնադրամի հիմնադիրը

2.1. Հիմնադրամի հիմնադիրը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկն է (այսուհետ՝ Կենտրոնական բանկ): Կենտրոնական բանկի գտնվելու վայրն է՝ ք. Երևան 0010, Վ. Սարգսյան 6 (էլեկտրոնային հասցեն՝ info@cba.am):

ԳԼՈՒԽ 3. Հիմնադրամի նպատակը

3.1. Հիմնադրամի գործունեության նպատակը Օրենքով սահմանված ավանդների հատուցման երաշխավորումն ու ավանդատուների շահերի պաշտպանությունն է:

3.2. Իր առջև դրված նպատակն իրագործելու համար Հիմնադրամը՝

3.2.1. Օրենքով սահմանված պայմաններով կառավարում է Հիմնադրամի միջոցները.

3.2.2. հատուցում է երաշխավորված ավանդները՝ Օրենքով սահմանված կարգով, չափով և դեպքում.

3.2.3. միջնորդություններ է ներկայացնում Կենտրոնական բանկ Օրենքով սահմանված երաշխիքային վճարները չվճարած բանկերի նկատմամբ պատժամիջոցներ կիրառելու, բանկերի ներկայացրած հաշվետվությունների արժանահավատությունը պարզելու նպատակով Կենտրոնական բանկի կողմից ստուգումներ անցկացնելու համար.

3.2.4. հավաքագրում է Օրենքով սահմանված երաշխիքային վճարները.

3.2.5. իրականացնում է Հիմնադրամի միջոցների, երաշխավորված ավանդների, ավանդատուների թվի և այլ վերլուծություններ.

3.2.6. ստանում է վարկեր (փոխառություններ), երաշխիքներ, դրամաշնորհներ, նվիրատվություններ և նվիրաբերություններ.

3.2.7. ստանում է անհրաժեշտ տեղեկատվություն՝ հատուցումը Օրենքով սահմանված կարգով կազմակերպելու համար.

3.2.8. լուսաբանում է ավանդների երաշխավորման և հատուցման գործընթացը.

3.2.9. կազմակերպում է հատուցման գործընթացը.

3.2.10. իրականացնում է Օրենքով սահմանված այլ գործառույթներ:

ԳԼՈՒԽ 4. Հիմնադրամի ձեռնարկատիրական և այլ գործունեությունը

4.1. Հիմնադրամը Հայաստանի Հանրապետության օրենսդրության շրջանակներում և սույն Կանոնադրության հիման վրա կարող է ձեռնարկատիրական գործունեություն իրականացնել, եթե դա ծառայում է Հիմնադրամի նպատակների իրականացմանը և համապատասխանում է այդ նպատակներին:

4.2. Հիմնադրամը կարող է ձեռնարկատիրական գործունեություն իրականացնել ինքնուրույն կամ իր կողմից ստեղծված տնտեսական ընկերությունների միջոցով:

4.3. Հիմնադրամը կարող է՝

4.3.1. կնքել օրենսդրությամբ չարգելված պայմանագրեր և գործարքներ.

4.3.2. օրենքով սահմանված կարգով ձեռք բերել, ստանալ, վարձակալել կամ այլ պայմաններով, այդ թվում նաև անվճար, օգտագործել անշարժ գույք, հիմնական միջոցներ, օրենքով չարգելված այլ գույք.

4.3.3. օտարել կամ վարձակալության և անվճար օգտագործման հանձնել Հիմնադրամին պատկանող ցանկացած անշարժ և շարժական գույք.

4.3.4. կնքել համաձայնագրեր օտարերկրյա ոչ առևտրային և ոչ կառավարական կազմակերպությունների հետ, իր աշխատակիցներին և այլ անձանց գործուղել այլ երկրներ, հրավիրել այլ երկրներից քաղաքացիներ.

4.3.5. ներդրումներ կատարել սույն Կանոնադրության 5.5-րդ կետում նշված ֆինանսական ակտիվներում.

4.3.6. Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և սույն Կանոնադրությանը համապատասխան անդամակցել տեղական, միջազգային և օտարերկրյա պետական և ոչ-պետական կազմակերպություններին.

4.3.7. ինքնուրույն կազմավորել իր ֆինանսական ռեսուրսները, այդ թվում՝ ստանալ վարկեր, փոխառություններ, դրամաշնորհներ, հանգանակություններ, ձեռք բերել գույքային և ոչ գույքային իրավունք, տիրապետել և տնօրինել դրանք և դրանցից ստացված եկամուտները.

4.3.8. Օրենքով սահմանված կարգով ստանալ բանկային գաղտնիք կազմող և այլ տեղեկություններ, որոնք անհրաժեշտ են իր կանոնադրական նպատակներն իրականացնելու համար.

4.3.9. Հիմնադրամի կողմից ավանդների երաշխավորման և հատուցման գործընթացի լուսաբանման համար ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ.

4.3.10. իրականացնել օրենսդրությամբ չարգելված այլ գործունեություն:

ԳԼՈՒԽ 5. Հիմնադրամի սկզբնական գույքի արժեքը, դրա ձևավորման աղբյուրները. Հիմնադրամի գույքի տնօրինման և կառավարման կարգը

5.1. Հիմնադրամի սկզբնական գույքը ձևավորվում է բանկերի կողմից Օրենքի համաձայն Կենտրոնական բանկում բացված հատուկ հիմնադրամի հաշվում կուտակվող երաշխիքային վճարների գումարներից, որոնք Հիմնադրամի ստեղծման պահից տասը օրվա ընթացքում փոխանցվում են Հիմնադրամի հաշվին:

5.2. Հիմնադրամի գույքի սկզբնական արժեքը սույն կանոնադրությունը հաստատելու պահին կազմում է 756.754.941 Հայաստանի Հանրապետության դրամ:

5.3. Հիմնադրամի գույքի ձևավորման աղբյուր կարող են լինել՝

5.3.1. Օրենքով սահմանված երաշխիքային վճարների գումարները.

5.3.2. դրանց կառավարումից ստացված եկամուտները.

5.3.3. Հիմնադրամի կողմից հատուցված և բանկերի նկատմամբ ձեռք բերած պահանջի հիման վրա բանկերից ստացված գումարները.

5.3.4. Հիմնադրամի անունից ստացած վարկերը, փոխառությունները, երաշխիքները, դրամաշնորհները, հանգանակությունները, նվիրատվությունները և նվիրաբերությունները՝ այդ թվում օտարերկրյա քաղաքացիների, իրավաբանական անձանց և միջազգային կազմակերպությունների.

5.3.5. օրենքով չարգելված այլ եկամուտներն ու միջոցները:

5.4. Հիմնադրամի գույքի տնօրինումը և կառավարումը իրականացվում է Օրենքով, սույն Կանոնադրությամբ և Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) կողմից սահմանված կարգով:

5.5. Հիմնադրամի միջոցները կարող են ներդրվել Օրենքով սահմանված, բացառապես վերադարձման բարձր հուսալիություն ունեցող հետևյալ ֆինանսական ակտիվներում՝

5.5.1. Հայաստանի Հանրապետության պետական արժեթղթերում.

5.5.2. Կենտրոնական բանկում և բարձր վարկանիշ ունեցող առաջնակարգ օտարերկրյա բանկերում՝ որպես բանկային ավանդ և (կամ) բանկային հաշիվ.

5.5.3. Կենտրոնական բանկի արժեթղթերում.

5.5.4. ոսկու ստանդարտացված ձուլակտորներում.

5.5.5. բարձր վարկանիշ ունեցող երկրների կառավարությունների և (կամ) կենտրոնական բանկերի արժեթղթերում.

5.5.6. բարձր վարկանիշ ունեցող առաջնակարգ կազմակերպությունների և (կամ) բանկերի արժեթղթերում.

5.5.7. Խորհրդի որոշմամբ և Կենտրոնական բանկի խորհրդի հետ համաձայնեցմամբ՝ այլ ֆինանսական ակտիվներում: Վարկանիշների թույլատրելի սահմանչափերը և վարկանիշ սահմանող ընդունելի կազմակերպությունների ցանկը սահմանում է Խորհուրդը՝ համաձայնեցնելով Կենտրոնական բանկի խորհրդի հետ:

5.6. Հիմնադրամի ծախսերը և կապիտալ ներդրումների ծրագիրը.

5.6.1. Հիմնադրամի ծախսերն են՝

5.6.1.1. գործառնական ծախսերը (այդ թվում՝ ավանդների հատուցման հետ կապված ծախսերը).

5.6.1.2. վարչական ծախսերը:

5.6.2. Կապիտալ ներդրումների ծրագիրն իրենից ներկայացնում է՝

5.6.2.1. Հիմնադրամի հիմնական գործունեության ապահովման նպատակով իրականացվող կապիտալ ներդրումները.

5.6.2.2. վարչական նպատակներով իրականացվող կապիտալ ներդրումները:

5.7. Հիմնադրամի տարեկան վարչական ծախսերը, գործառնական ծախսերը և կապիտալ ներդրումների ծրագիրը հաստատվում են Խորհրդի կողմից՝ Հիմնադրամի ընթացիկ գործունեությունն ապահովելու, նրա կողմից Օրենքով սահմանված գործառույթներն իրականացնելու նպատակով:

5.8. Վարչական ծախսերը ներառում են Հիմնադրամի գործադիր մարմնի, Վերստուգիչ հանձնաժողովի անդամների (վերստուգիչի), աշխատողների աշխատավարձը, Խորհրդի անդամների պարտականությունների կատարմամբ պայմանավորված՝ փոխհատուցման ենթակա ծախսերը, ինչպես նաև Հիմնադրամի ընթացիկ գործունեության իրականացումն ապահովելու համար այլ ծախսերը: Հիմնադրամի վարչական ծախսերի հաշվառումը պետք է կատարվի Հիմնադրամի այլ ծախսերից առանձնացված, Օրենքով սահմանված կարգով:

5.9. Հիմնադրամի, դրա ղեկավարների կամ երրորդ անձանց պարտավորությունների համար, որոնք կապված չեն երաշխավորված ավանդների հատուցման հետ (ներառյալ՝ երաշխավորված ավանդների փաստացի կամ հնարավոր հատուցման համար ներգրավված վարկերը և փոխառությունները), Հիմնադրամի միջոցների վրա բռնագանձում, գանձում կամ արգելանք չի կարող կիրառվել՝ բացառությամբ Հիմնադրամի նյութական ակտիվների և վարչական ծախսերի:

ԳԼՈՒԽ 6. Հիմնադրամի հնարավոր շահառուների խմբերը

6.1. Հիմնադրամի շահառուներն են Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերը, ավանդատուները:

ԳԼՈՒԽ 7. Հիմնադրամի գործունեության ժամկետը

7.1. Հիմնադրամն ստեղծված է համարվում օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցվելու պահից և գործում է անժամկետ:

ԳԼՈՒԽ 8. Խորհուրդը, դրա կազմը և անդամների նշանակման կարգը

8.1. Հիմնադրամի կառավարման բարձրագույն մարմինը խորհուրդն է:

8.2. Խորհուրդը կազմված է յոթ անդամից՝ Խորհրդի նախագահ և մյուս անդամներ:

8.3. Խորհրդի անդամները նշանակվում են հետևյալ կարգով՝ երկու անդամին նշանակում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը, երկու անդամին՝ Կենտրոնական բանկի խորհուրդը, երկու անդամին՝ Հայաստանի բանկերի միությունը: Խորհրդի մեկ անդամն ընտրվում է Խորհրդի նշանակված անդամների կողմից (այսուհետ՝ անկախ անդամ): Խորհրդի նախագահը ընտրվում է Խորհրդի անդամների կողմից:

8.4. Խորհրդի անդամները նշանակվում են հինգ տարի ժամկետով և կարող են նույն պաշտոնում վերանշանակվել կամ վերընտրվել:

8.5. Խորհրդի անդամները իրենց պարտականությունները կատարում են առանց վարձատրության՝ հասարակական հիմունքներով:

8.6. Խորհրդի անդամի՝ իր կողմից Խորհրդի անդամի պարտականությունների կատարման հետ կապված ծախսերը փոխհատուցվում են՝ Խորհրդի կողմից սահմանված կարգով:

8.7. Խորհրդի անդամն ազատվում է պաշտոնից Օրենքով սահմանված դեպքերում:

8.8. Խորհրդի անդամի թափուր տեղ առաջանալու դեպքում (բացառությամբ խորհրդի անկախ անդամի), Խորհուրդը տեղեկացնում է այդ մասին լիազորությունները դադարած անդամին նշանակած մարմնին, որը, Օրենքով սահմանված կարգով, նշանակում է նոր խորհրդի անդամին:

8.9. Խորհրդի անկախ անդամի թափուր տեղ առաջանալու դեպքում, Խորհրդի նոր անկախ անդամը ընտրվում է սույն Կանոնադրության 8.3 կետով սահմանված կարգով Խորհրդի առաջիկա նիստում:

ԳԼՈՒԽ 9. Խորհրդի նիստերը

9.1. Խորհուրդն իր գործունեությունն իրականացնում է նիստերի միջոցով: Խորհրդի նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա են Խորհրդի առնվազն հինգ անդամ, ընդ որում Խորհրդի անդամները Խորհրդի նիստերին մասնակցում են անձամբ: Խորհրդի նիստերում յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայն: Խորհուրդը որոշումները կայացնում է ընդհանուր ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում Խորհրդի նախագահի ձայնը որոշիչ է:

9.2. Խորհրդի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով Խորհրդի որոշմամբ կարող են հրավիրվել փորձագետ (ներ): Խորհրդի նիստերի բոլոր հարցերի քննարկումը կարող է տեղի ունենալ միայն Հիմնադրամի տնօրենի պարտադիր մասնակցությամբ, բացառությամբ Հիմնադրամի տնօրենի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման, ինչպես նաև նրա վարձատրության պայմանների հաստատման հարցերի: Հիմնադրամի տնօրենը մասնակցում է Խորհրդի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով:

9.3. Խորհրդի նիստերը արձանագրվում են: Արձանագրությունը երկու օրվա ընթացքում ստորագրվում է նիստին ներկա եղած բոլոր անդամների կողմից և պահվում է Հիմնադրամում առնվազն հինգ տարի, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

9.4. Հիմնադրամի Խորհրդի նիստերը կարող են գումարվել ամիսը մեկ անգամ՝ բայց ոչ պակաս քան եռամսյակը մեկ անգամ՝ Խորհրդի նախագահի կողմից: Խորհրդի նիստերը կարող են հրավիրվել նաև Խորհրդի անդամների մեկ երրորդի պահանջով՝ Խորհրդի նախագահի կողմից՝ համապատասխան պահանջը ներկայացնելուց 10 օրվա ընթացքում: Խորհրդի նիստերը կարող են անցկացվել էլեկտրոնային փոստի կամ կապի այլ միջոցների կիրառմամբ:

9.5. Եթե նշված ժամկետում Խորհրդի նախագահը նիստ չի հրավիրում, ապա նիստը կարող են հրավիրել նման պահանջ ներկայացրած անձինք:

9.6. Խորհրդի նիստը գումարվում է նաև Հիմնադրամի տնօրենի առաջարկով, եթե.

9.6.1. տեղի է ունեցել Օրենքով սահմանված հատուցման դեպք.

9.6.2. հատուցման ընթացքում առաջացել են խնդիրներ, որոնց լուծման իրավասությունը պատկանում է Խորհրդին.

9.6.3. Հիմնադրամի բնականոն գործունեության ընթացքում առաջացել է անհապաղ լուծում պահանջող խնդիրների լուծման անհրաժեշտություն: Սույն կետով նախատեսված հիմքերով Խորհրդի նիստը գումարվում է Հիմնադրամի տնօրենի կողմից առաջարկը ներկայացնելու հաջորդ օրը:

ԳԼՈՒԽ 10. Խորհրդի նիստերի կազմակերպումը

10.1. Խորհրդի անդամները, մինչև Խորհրդի նիստի անցկացման օրվան նախորդող 10-րդ օրը Հիմնադրամի տնօրենին են ներկայացնում այն հարցերը և դրանց վերաբերյալ անհրաժեշտ նյութերը (կարծիքները, Խորհրդի որոշման նախագծերը), որոնք պետք է ընդգրկվեն Խորհրդի նիստի օրակարգում:

10.2. Հիմնադրամի տնօրենը, ստացված հարցերի և իր կողմից բարձրացված հարցերի հիման վրա կազմում է Խորհրդի նիստի օրակարգը և կազմում Խորհրդի համապատասխան որոշումների նախագծերը: Կազմված օրակարգը, որոշումների նախագծերը, կից նյութերը Հիմնադրամի տնօրենը ներկայացնում է Խորհրդի անդամներին Խորհրդի նիստի անցկացման օրվանից ոչ ուշ, քան նիստից 3 օր առաջ:

10.3. Խորհրդի նիստի ընթացքում, Խորհուրդը հաստատում է Հիմնադրամի կողմից ներկայացված օրակարգը կամ, անհրաժեշտության դեպքում, օրակարգում համապատասխան փոփոխություններ և լրացումներ է կատարում:

ԳԼՈՒԽ 11. Խորհրդի իրավասությունները

11.1. Խորհուրդն իրականացնում է հետևյալ լիազորությունները՝

11.1.1. որոշում է ընդունում ավանդների հատուցումը սկսելու մասին.

11.1.2. որոշում է ընդունում ավանդների հատուցման և հատուցելը կազմակերպելու համար անհրաժեշտ միջոցների չափի մասին.

11.1.3. ընտրում է վճարում իրականացնող բանկին, հաստատում է հատուցումը կազմակերպելու վերաբերյալ վճարում իրականացնող բանկի և Հիմնադրամի միջև կնքվող պայմանագրի էական պայմանները.

11.1.4. հաստատում է Հիմնադրամի կանոնադրությունը, դրա մեջ փոփոխությունները և լրացումները.

11.1.5. հաստատում է Հիմնադրամի գործունեությունը կարգավորող ներքին կարգերը.

11.1.6. հաստատում է Հիմնադրամի վարչակազմակերպական կառուցվածքը.

11.1.7. որոշում է Հիմնադրամի միջոցների կառավարման նպատակով Հիմնադրամի միջոցների ներդրման ուղենիշային պայուսակը՝ համաձայնեցնելով Կենտրոնական բանկի խորհրդի հետ.

11.1.8. որոշում է ընդունում հատուցման համար Հիմնադրամի միջոցների անբավարարության մասին.

11.1.9. հատուցման համար Հիմնադրամի միջոցների անբավարարության դեպքում որոշում է ընդունում անհրաժեշտ միջոցներ ներգրավելու ուղղությունների և պայմանների վերաբերյալ.

11.1.10. առնվազն եռամսյակը մեկ անգամ, իսկ հատուցման դեպք տեղի ունենալու պարագայում՝ ամիսը մեկ անգամ, լսում է Հիմնադրամի տնօրենի հաշվետվությունները.

11.1.11. ընտրում է Հիմնադրամի աուդիտն իրականացնող անձին (աուդիտորին), սահմանում է վերջինիս վճարման չափը.

11.1.12. ընտրում է Խորհրդի անկախ անդամին, իսկ Խորհրդի անկախ անդամի թափուր տեղ առաջանալու դեպքում՝ Խորհրդի նոր անկախ անդամին.

11.1.13. վերահսկում է իր որոշումների կատարման ընթացքը.

11.1.14. վերահսկում է Հիմնադրամի ընթացիկ և ֆինանսատնտեսական գործունեությունը.

11.1.15. ընդունում է որոշումներ Խորհրդի նախագահի, Հիմնադրամի տնօրենի ընտրության և դրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցման, ինչպես նաև Հիմնադրամի այլ մարմիններ ձևավորվելու մասին, սահմանում է Հիմնադրամի տնօրենի վարձատրության չափը.

11.1.16. հաստատում է Հիմնադրամի վարչական ծախսերը և դրա փոփոխությունները, տարեկան ֆինանսական հաշվետվությունները և հիմնադրամի գործունեության տարեկան հաշվետվությունները.

11.1.17. հաստատում է Հիմնադրամի աշխատակիցների վարձատրման, պարգևատրման և խորհրդի անդամների, իրենց կողմից խորհրդի անդամների պարտականությունների կատարման հետ կապված ծախսերի փոխհատուցման վճարման կարգը.

11.1.18. նշանակում է Հիմնադրամի վերստուգիչ հանձնաժողովի անդամներին կամ վերստուգիչին, սահմանում է նրանց վարձատրության չափը.

11.1.19. վերահսկում է Հիմնադրամի կողմից օրենքների, իրավական այլ ակտերի կատարումը.

11.1.20. գնահատում է իրականացված աուդիտորական արդյունքները, վերահսկում է բացահայտված թերությունների վերացմանն ուղղված միջոցառումների կատարումը.

11.1.21. ապահովում է ներքին հսկողության իրականացումը.

11.1.22. համաձայնություն է տալիս խոշոր գործարքների կնքմանը.

11.1.23. առաջարկություն է ներկայացնում Խորհրդի անդամներին նշանակած մարմիններին տվյալ Խորհրդի անդամին պաշտոնից ազատելու վերաբերյալ.

11.1.24. որոշում է ընդունում Խորհրդին կից հանձնաժողովների ստեղծման վերաբերյալ.

11.1.25. որոշում է ընդունում տնտեսական ընկերությունների ստեղծման և դրանցում մասնակցության մասին.

11.1.26. սահմանում է վարկանիշների թույլատրելի սահմանաչափերը և վարկանիշ սահմանող ընդունելի կազմակերպությունների ցանկը՝ համաձայնեցնելով Կենտրոնական բանկի հետ.

11.1.27. որոշում է ընդունում խորհրդի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով փորձագետներ հրավիրելու վերաբերյալ.

11.1.28. իրականացնում է Օրենքով և սույն Կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

11.1.29 Խորհուրդն առնվազն հինգ տարին մեկ քննարկում է երաշխավորված ավանդի չափերի վերանայման հարցը՝ սույն կանոնադրությամբ սահմանված չափորոշիչներին համապատասխանության տեսանկյունից:

11.1.29.1 սույն կանոնադրությամբ սահմանված չափորոշիչներն են՝ Օրենքով սահմանված երաշխավորված ավանդի առավելագույն չափի և Հայաստանի Հանրապետությունում մեկ շնչին ընկնող համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) հարաբերակցությունը, Հայաստանի Հանրապետության բանկային համակարգում երաշխավորված ավանդ ունեցող ավանդատուների ընդհանուր թվի մեջ երաշխավորված ավանդի չափը չգերազանցող ավանդատուների թվի կշիռը, Հայաստանի Հանրապետության բանկային համակարգում ֆիզիկական անձանց բանկային ավանդների ընդհանուր գումարի մեջ երաշխավորված ավանդների գումարի կշիռը:

11.1.30 Երաշխավորված ավանդի չափերի պահպանման կամ փոխարինման վերաբերյալ Կենտրոնական բանկին առաջարկություն ներկայացնելու մասին որոշում կայացնելիս Խորհուրդը հաշվի է առնում նաև Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական համակարգի իրավիճակը, ինչպես նաև ավանդների երաշխավորման ոլորտում համաշխարհային զարգացումները:

11.2. Սույն Կանոնադրության իմաստով խոշոր գործարք է համարվում մեկ կամ մի քանի փոխկապակցված գործարքների կնքումը, որոնք ուղղակի կամ անուղղակի կապված են Հիմնադրամի կողմից գույքի ձեռքբերման, օտարման կամ գույքի օտարման հնարավորության հետ, և որոնց արժեքը գործարքը կնքելու մասին որոշում ընդունելու պահի դրությամբ կազմում է տվյալ տարվա համար հաստատված վարչական ծախսերի 5%:

11.3. Խորհրդի իրավասություն հանդիսացող հարցերը չեն կարող փոխանցվել այլ մարմնի:

11.4. Խորհուրդն իրավունք ունի ծանոթանալու Հիմնադրամի բոլոր փաստաթղթերին:

ԳԼՈՒԽ 12. Խորհրդի նախագահը

12.1. Խորհրդի նախագահը՝

12.1.1. կազմակերպում է Խորհրդի աշխատանքները, ստորագրում է Խորհրդի կողմից ընդունված որոշումները.

12.1.2. գումարում է Խորհրդի նիստերը և նախագահում է դրանք.

12.1.3. կազմակերպում է նիստերի արձանագրության վարումը.

12.1.4. կորդինացնում է Խորհրդին կից հանձնաժողովների գործունեությունը.

12.1.5. սույն Կանոնադրության 11.1-րդ կետի 11.1.15. ենթակետի հիման վրա ընդունված Խորհրդի որոշման համաձայն Հիմնադրամի անունից կնքում է Հիմնադրամի և Հիմնադրամի տնօրենի միջև պայմանագիրը:

12.2. Խորհրդի նախագահը պատասխանատվություն է կրում Խորհրդի նիստի արձանագրությում առկա տեղեկությունների հավաստիության համար:

12.3. Խորհրդի նախագահի բացակայության դեպքում նրա պարտականությունները կատարում է տարիքով ավագ Խորհրդի անդամը:

ԳԼՈՒԽ 13. Խորհրդի անդամների վարքագծի էթիկայի կանոնները

13.1. Խորհրդի անդամների վարքագծի էթիկայի հիմնական սկզբունքներն են.

13.1.1. Ուղղված շահերի բախման (շահագրգռվածության) կանխարգելմանը՝

13.1.1.1. Խորհրդի անդամը չպետք է ուղղակիորեն կամ անուղղակիորեն (այլ անձանց միջոցով) օգտագործի իր պաշտոնական դիրքը անձնական շահերի բավարարման համար.

13.1.1.2. Խորհրդի անդամը իր պարտականություններն իրականացնելիս պետք է միշտ գործի՝ ելնելով Հիմնադրամի շահերից: Անդամը չպետք է իրականացնի գործարքներ, որոնք ի սկզբանե հակադրվում են կազմակերպության շահերին.

13.1.1.3. եթե Խորհրդի անդամը իր պարտականությունները իրականացնելիս բացահայտում է շահերի բախում կամ շահերի բախման հնարավորություն իր կամ իր հետ փոխկապակցված անձի (ծնող, ամուսին, զավակ, եղբայր քույր, ամուսնու ծնող, զավակ, եղբայր և քույր), ապա նա պետք է անհապաղ տեղյակ պահի այդ մասին Խորհրդին և չմասնակցի այդ հարցի վերաբերյալ քվեարկությանը.

13.1.1.4. Խորհրդի անդամը պարտավոր է Խորհրդին տեղյակ պահել կնքված կամ կնքման նախատեսված իրեն հայտնի այն գործարքների մասին, որոնցում ինքը, կամ իր հետ փոխկապակցված անձիք, կարող են համարվել շահագրգիռ անձ.

13.1.1.5. շահագրգռվածություն ունեցող Խորհրդի անդամը չի մասնակցում շահագրգռվածության առկայությամբ գործարքը կնքելու մասին որոշումն ընդունելու վերաբերյալ հարցի քննարկմանը: Խորհրդի անդամը համարվում է որևէ հարցի քննարկման կապակցությամբ շահագրգիռ, եթե տվյալ հարցի քննարկման արդյունքում կայացվելիք որոշումը կապված է նրա կամ նրա ընտանիքի անդամների եկամտի աղբյուրների, ինչպես նաև նրա և նրա հետ ընդհանուր տնտեսություն վարող անձանց ֆինանսական շահերի հետ:

13.1.2. Համատեղվող աշխատանքի վերաբերյալ՝

13.1.2.1. Համատեղվող աշխատանք(ներ)ի կատարումը չպետք է խանգարի Խորհրդի անդամի կողմից Հիմնադրամում իր պարտականությունների լիարժեք կատարմանը.

13.1.2.2. Համատեղվող աշխատանքի ժամերի քանակը և ժամանակացույցը չպետք է խոչընդոտեն Խորհրդի անդամի կողմից Հիմնադրամում իր հիմնական պարտականությունների կատարմանը:

13.1.3. Տեղեկատվության օգտագործման վերաբերյալ՝

13.1.3.1.Խորհրդի անդամը պետք է տրամադրի իրեն հայտնի լիարժեք, պարզ և ճշգրիտ տեղեկատվություն քննարկվող հարցերի վերաբերյալ.

13.1.3.2.Խորհրդի անդամը չպետք է հրապարակի իրեն հայտնի դարձած պետական, բանկային, առևտրային և ծառայողական գաղտնիք հանդիսացող տեղեկատվությունը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի.

13.1.3.3.Խորհրդի անդամը Խորհրդին պետք է ճշգրտորեն ներկայացնի Հիմնադրամի աշխատակիցների արտահայտած կարծիքները, տեսակետները, ինչպես նաև նրանց վերաբերող տեղեկատվությունը:

13.1.4. Խորհրդի անդամը պետք է հարգալից վերաբերվի Խորհրդի այլ անդամներին և Հիմնադրամի աշխատակիցներին, ինչպես նաև վերջիններիս կողմից արտահայտված կարծիքներին և տեսակետներին:

13.1.5. Խորհրդի անդամի գործողությունները (կամ անգործությունը) չպետք է վարկաբեկեն Հիմնադրամին:

13.1.6. Խորհրդի անդամը պատասխանատու է իր կողմից ընդունված որոշումների համար:

13.2. Խորհրդի անդամները չեն կարող Հիմնադրամում զբաղեցնել վճարովի որևէ պաշտոն:

ԳԼՈՒԽ 14. Խորհրդի անդամների միջև աշխատանքների բաշխումը և խորհրդի անդամների պատասխանատվությունը

14.1. Խորհրդի անդամների միջև պարտականությունների բաշխումն իրականացնում Խորհուրդը՝ Խորհրդի նախագահի առաջարկությամբ:

14.2. Խորհրդի անդամը կոորդինացնում է Հիմնադրամի գործունեության՝ իրեն վերապահված կոնկրետ ոլորտի աշխատանքները և պատասխանատվություն կրում այդ ոլորտում Խորհրդի կողմից իր վրա դրված պարտականությունների կատարման համար:

ԳԼՈՒԽ 15. Հիմնադրամի տնօրենը

15.1. Հիմնադրամի ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Հիմնադրամի տնօրենը: Հիմնադրամի տնօրենը՝

15.1.1. ապահովում է Հիմնադրամի բնականոն գործունեությունը.

15.1.2. իր իրավասությունների ներքո պատրաստում է Խորհրդի նիստերի օրակարգերը և որոշումների նախագծերը.

15.1.3. Խորհրդի որոշած ուղենիշային պայուսակին համապատասխան կառավարում է Հիմնադրամի միջոցները.

15.1.4. առանց լիազորագրի հանդես է գալիս Հիմնադրամի անունից, տալիս է լիազորագրեր.

15.1.5. Հիմնադրամի անունից կնքում է գործարքներ, իսկ Խորհրդի համաձայնության դեպքում նաև սույն կանոնադրությամբ սահմանված խոշոր գործարքներ.

15.1.6. Հիմնադրամի անունից կնքում է պայմանագրեր, այդ թվում աշխատանքային.

15.1.7. Խորհրդի հաստատմանն է ներկայացնում Հիմնադրամի աշխատանքային ներքին կանոնակարգերը, Հիմնադրամի վարչակազմակերպական կառուցվածքը, հաստիքացուցակը.

15.1.8. սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Հիմնադրամի աշխատակիցներին, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ.

15.1.9. Խորհրդի հաստատմանն է ներկայացնում Հիմնադրամի տարեկան վարչական, գործառնական ծախսերի նախահաշիվը և կապիտալ ներդրումների ծրագիրը.

15.1.10. առնվազն եռամսյակը մեկ անգամ, իսկ հատուցման դեպք տեղի ունենալու պարագայում՝ ամիսը մեկ անգամ, հաշվետվություն է ներկայացնում Խորհրդին Հիմնադրամի գործունեության և միջոցների վերաբերյալ.

15.1.11. մոնիտորինգ է իրականացնում և Խորհրդին է ներկայացնում հատուցման ընթացքի վերաբերյալ հաշվետվություններ.

15.1.12. առաջարկ է անում արտահերթ Խորհրդի նիստ գումարելու վերաբերյալ.

15.1.13. հատուցման դեպք տեղի ունենալու պարագայում խորհրդի հաստատմանն է ներկայացնում հատուցումը կազմակերպելու համար անհարժեշտ ծախսերը (այդ թվում՝ հատուցման համար).

15.1.14. հատուցման համար Հիմնադրամի միջոցները չբավարարելու դեպքում Խորհրդին է ներկայացնում չբավարարող գումարի չափը, ինչպես նաև Խորհրդի առջև քննարկման է ներկայացնում լրացուցիչ միջոցների ներգրավման ուղիները.

15.1.15. Խորհրդի հաստատմանն է ներկայացնում տարեկան հաշվետվությունները.

15.1.16. կնքում է Խորհրդի կողմից ընտրված անկախ աուդիտորական կազմակերպության և Հիմնադրամի միջև աուդիտորական ստուգումը իրականացնելու մասին պայմանագիրը.

15.1.17. իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում է դրանց կատարումը.

15.1.18. միջոցներ է ձեռնարկում Հիմնադրամի ֆինանսական տարվա ավարտից հետո քառամսյա ժամկետում Հիմնադրամի գործունեության վերաբերյալ անկախ աուդիտորական կազմակերպության համառոտ եզրակացությունը հրապարակելու ուղղությամբ.

15.1.19. հատուցման դեպքի օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային http://www.azdarar.am կայքում և առնվազն մեկ հանրային լրատվամիջոցով հատուցման դեպքի վերաբերյալ հայտարարություն է հրապարակում՝ նշելով երաշխավորված ավանդն ստանալու կարգը.

15.1.20. հատուցման դեպքում Օրենքով սահմանված ժամկետներում և կարգով հրապարակում է լրացուցիչ հայտարարություն.

15.1.21. սահմանում է Հիմնադրամին ներկայացվող երաշխավորված ավանդի ստացման գրավոր դիմումի ձևը.

15.1.22. կազմակերպում է իրենց ավանդների վերաբերյալ քաղվածքներում անհամապատասխանություններ հայտնաբերած ավանդատուների հետ պարզաբանող հանդիպումները.

15.1.23. իրականացնում է Օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված այլ լիազորություններ:

15.2. Հիմնադրամի տնօրենը առանց Խորհրդի համաձայնության չի կարող զբաղեցնել այլ պաշտոն, կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:

15.3. Հիմնադրամի տնօրենը պետք է համապատասխանի Կենտրոնական բանկի կողմից բանկի գործադիր տնօրենների համար սահմանված մասնագիտական համապատասխանության և որակավորման պահանջներին և պետք է ունենա համապատասխան որակավորման վկայական: Հիմնադրամի տնօրենի որակավորման կարգը սահմանում է Կենտրոնական բանկը: Հիմնադրամի և Հիմնադրամի տնօրենի միջև կնքված պայմանագիրը կարող է ցանկացած ժամանակ լուծվել Խորհրդի կողմից՝ տվյալ պայմանագրով սահմանված կարգով:

15.4. Հիմնադրամի տնօրենը պատասխանատվություն է կրում Հիմնադրամի հաշվապահական հաշվառման կազմակերպման, դրա վիճակի և հավաստիության, տարեկան հաշվետվության, ֆինանսական և վիճակագրական հաշվետվություններն օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված մարմիններին ժամանակին ներկայացնելու, ինչպես նաև հիմնադրամի մարմիններին և այլ անձանց տրամադրվող տեղեկությունների հավաստիության համար: Հիմնադրամի տնօրենի՝ Օրենքին, սույն Կանոնադրությանը չհակասող այլ իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պատասխանատվությունը սահմանվում են սույն գլխի 15.3 կետում նշված պայմանագրով:

15.5. *(Ուժը կորցրել է 15.11.19թ փոփոխությամբ)*

ԳԼՈՒԽ 16. Հիմնադրամի վերստուգիչ հանձնաժողովը (կամ վերստուգիչը). Դրա լիազորությունները

16.1. Հիմնադրամի վերստուգիչ հանձնաժողովը (կամ վերստուգիչը) նշանակվում է Խորհրդի կողմից՝մինչև 3 տարի ժամկետով:

16.2. Հիմնադրամի վերստուգիչ հանձնաժողովի քանակական կազմը սահմանվում է Խորհրդի որոշմամբ:

16.3. Հիմնադրամի վերստուգիչ հանձնաժողովը (կամ վերստուգիչը) իր լիազորությունների շրջանակներում՝

16.3.1. հսկողություն է իրականացնում Հիմնադրամի ընթացիկ գործունեության և գործառնական ռիսկերի նկատմամբ.

16.3.2. հսկողություն է սահմանում հաշվապահական հաշվառման և հաշվետվության վարման նկատմամբ.

16.3.3. հսկողություն է իրականացնում Հիմնադրամի տնօրենի և ստորաբաժանումների կողմից օրենքների, այլ իրավական ակտերի և Հիմնադրամի ներքին ակտերի, տրված հանձնարարականների կատարման նկատմամբ.

16.3.4. խորհրդին հաշվետվություն է ներկայացնում օրենքներին և այլ իրավական ակտերին Հիմնադրամի գործունեության համապատասխանության, ինչպես նաև Կենտրոնական բանկի հանձնարարականները սահմանված ժամկետում կատարելու մասին.

16.3.5. եզրակացություններ և առաջարկություններ է տալիս Խորհրդի ներկայացրած, ինչպես նաև սեփական նախաձեռնությամբ առաջադրված հարցերի վերաբերյալ.

16.4. Վերստուգիչ հանձնաժողովը (կամ վերստուգիչը) ստուգում է Հիմնադրամի ֆինանսա- տնտեսական գործունեությունը սեփական նախաձեռնությամբ՝ ցանկացած ժամանակ կամ խորհրդի որոշմամբ:

16.5. Վերստուգիչ հանձնաժողովի (վերստուգիչի) պահանջով նրան պետք է ներկայացվեն Հիմնադրամի ֆինանսատնտեսական գործունեությանը վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, նյութերը և բացատրությունները:

16.6. Վերստուգիչ հանձնաժողովը (կամ վերստուգիչը) կարող է պահանջել արտահերթ խորհրդի նիստի գումարում՝ Խորհրդի կողմից սահմանված կարգով և ժամկետներում:

16.7. Վերստուգիչ հանձնաժողովի նիստերը գումարվում ամսական առնվազն մեկ անգամ: Արտահերթ նիստ կարող է հրավիրվել խորհրդի կամ վերստուգիչ հանձնաժողովի առնվազն երկու անդամների պահանջով:

16.8. Վերստուգիչ հանձնաժողովի (կամ վերստուգիչի) իրավասություններին վերաբերվող հարցերը չեն կարող փոխանցվել Հիմնադրամի այլ մարմինների լուծմանը:

16.9. Վերստուգիչ հանձնաժողովի անդամները (կամ վերստուգիչը) չեն կարող Հիմնադրամում զբաղեցնել այլ պաշտոն, կամ լինել Հիմնադրամի կառավարման մարմինների հետ փոխկապակցված անձինք:

16.10. Վերստուգիչ հանձնաժողովը (կամ վերստուգիչը) հաշվետու է Խորհրդին: Վերստուգիչ հանձնաժողովը (կամ վերստուգիչը) Խորհրդին հաշվետվություններ է ներկայացնում Խորհրդի որոշմամբ սահմանված կարգով:

16.11. Վերստուգիչ հանձնաժողովը (կամ վերստուգիչը) օրենքների, այլ իրավական ակտերի խախտումներ բացահայտելու դեպքում պարտավոր է դրանք ներկայացնել Խորհրդին՝ միաժամանակ առաջարկելով այդ խախտումների վերացման և ապագայում չկրկնման ուղղությամբ ձեռնարկվելիք միջոցառումներ:

ԳԼՈՒԽ 17 . Հիմնադրամի լուծարումը

17.1. Հիմնադրամը կարող է լուծարվել կամ անվճարունակ (սնանկ) ճանաչվել միայն օրենքով, որով կսահմանվի նաև այդ դեպքում նրա գույքի օգտագործման կարգը: